



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

15
41



2011-05

Հ 6954



Լ. ԳԵՂԳԱԿԱՆՈՎԱ

ԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԶԱՅՈՒՄՈՎԻ

ԳԱՅՅԱԼ

Թարգմ. ռուսերէնից


Փ հ ձ լ հ ս

Տպ. Կ. Մարտիրոսյանցի || Տիպ. Կ. Մարտիրօսյանց.
Օբելյանովսկայ պ., դ. № 1|2,
1901

891715

շ-41

Ար



Հ Յ Ե Լ Գ Ա Խ Ա Խ Ա

ԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԶԱՍՏԵՄԱԿ

1002
1000

ԳԱՅԼ



Թարգմ. ռուսերէնից

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Կ. Մարտիրոսյանի տպաքան || Տիպ. Կ. Մարտիրոսյանց.

Օրբելյանովսկայ պլ., ձ. № 1/2

1901.



13 ... 2013

4486

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ Վարչական հանձնաժողովի
ՀԱՅԱՍՏԱՆԻ Վարչական հանձնաժողովի
ՀԱՅԱՍՏԱՆԻ Վարչական հանձնաժողովի

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Վարչական հանձնաժողովի

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դозволено цензурою. 6 Июня 1900 г. Тифлисъ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



Ետրոսը որսորդ էր, և, չգիտեմ
ինչու, վճռել էր բնակուել
իմ հալրենի անտառում: Մենք
երբէք իրար չէինք սիրում:
Հենց առաջին անգամ իրար
հանդիպեցինք թէ չէ՝ նա իմ
թշնամին դարձաւ և շարունակ աշխատում էր
ինձ բռնել կամ սպանել. կարո՞ղ էի արդեօք
դրանից լետու սիրել նրան:

Երբեմն մտածում էի, թէ Պետրոսը երեխ
այն որսորդներից մէկն է, որոնք սպանել են իմ
մօրը, փոքրիկ եղբօրս և քրոջս: Բայց այդ շատ
վաղուցուայ բան է, երբ ես դեռ փոքրիկ արջուկ
էի. և այժմ գրեթէ ոչինչ չեմ լիշում... Յիշում եմ
միան, որ մենք երեք քոթոթներս միասին շատ ու-
րախ ժամանակ էինք անց կացնում, երբ դեռ մեզ
խնամում էր մեր մալրիկը. մեր բան ու գործը

այն էր միայն, որ ամբողջ օրը ուրախ խաղ էինք անում: Ի՞նչպէս բարի ու սիրալիր էր մեր մայրիկը. այո՛, նա շատ բարի, էր, թէև ուրիշները այդպէս չէին կարծում:



բաղցած ու լզար արարած:

Ես հայր ունէի՛, բայց չկարծէք, թէ նա լս-

Ամեն ինչ
փոխուեց,
երբմիայնակ
մնացի: Ես
շատ փոքր
էի, այնպէս
որ չէի կա-
րողանում
ինքս ինձ
համար ու-
տելիք ճա-
րել.և առաջ՝
որ այնպէս
անհոգ ու
հաստիկ մի
կենդանի էի,
քիչ ժամա-
նակից լետով
դարձաւ մի
ողորմելի

կսեց հոգս քաշել իմ մասին, երբ անօգնական
մնացի. նա երեկի չէր էլ վիշտում, կա՞մ թէ չը-
կամ աշխարհիս երեսին: Ի՞նչ արած, այսպէս է
արջերիս սովորութիւնը. արջ-հայրերը հոգս չեն
անում իրանց զաւակների վրայ:

Առաջին շաբաթները մեծ դժուարութեամբ
կարողացաւ կեանքը քաշ տալ. իսկ երբ ամա-
ռուակ տաք օրերը սկսուեցան, իմ վիճակս էլ
փոքր ինչ լաւացաւ: Անտառում պտուղներն ու
կաղինը հասաւ. և ես ամեն տեսակից ուտում էի,
որքան սիրտս ուզում էր: Այդպիսով ձմեռուակ
երկարատև քնիս համար բաւական կազդուրուեցի
ու գերացաւ:

Փոքր առ փոքր մեծանալով՝ ես էլ մեծ արջ
դարձաւ և սկսեցի միայնակ կեանք վարել, ինչ-
պէս արջերիս սովորութիւնն է: Անտառում ես
առատօրէն գտնում էի իմ սիրած ուտե-
լիքները:

Ուտելիքի մէջ շատ էլ ընտրութիւն չէի
անում. ուտում էի ինչ որ պատահում էր — հացա-
բուսեր, արմատներ, սունկ, պտուղներ, ձկներ և
թռչունների ձուեր. ուտում էի նոյն իսկ թրո-
չուններ, եթէ միայն կարողանում էի նրանց
բոնել իրանց բներում: բայց ամենից շատ սի-
րում էի մեղք և մի առանձին ուրախութիւն էր
ինձ համար, երբ լսում էի ծառի վչակում մեղու-


ների բզզոցը և կարողանում էի նրանց փեթակ-
ներին մօտենալ: Իսկ նրանց խալթոցների վրայ
ամենեւին ուշադրութիւն էլ չէի դարձնում:

Թէւ մենաւոր կեանք էի վարում, բայց և
այնպէս բաւական գոհ էի իմ վիճակից, քանի որ
անպիտան Պետրոսը ինձ հարեւան չէր դարձել:
Ես ձեզ արդէն ասացի, թէ ինչպիսի անհան-
գիստ հարեւան էր այդ Պետրոսը: Մինչեւ ալժմ
չեմ կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ նա և
ուրիշ մարդիկ ինձ հալածում էին:

Եթէ նրանք ինձ հանգիստ թողնէին, ես եր-
բէք նրանց հետ գործ չէի ունենալ: Ես ամե-
նեւին նման չեմ իմ գիշատիչ միւս աղգական-
ներիս և իսկի չեմ էլ ուզում մարդկանց ուտել:
Իմ ուզածս այն է՝ որ ամառը հանգի՛ստ կոտրա-
տեմ ծառեր, իսկ ձմեռը երկա՛ր քննեմ:

Այս, եթէ գիտենալիք, թէ ինչքան քաղցր
բան է հանգիստ ընելը ամբողջ ձմեռուակ այն
ցրտաշունչ երկար ամիսները. եթէ գիտենալիք,
երեխ գուք ինքներդ էլ կըցանկալիք արջ դառ-
նաք: Աշնան սկզբներում ինձ համար յարմար
տեղ եմ որոնում մի փշակում, քարայրում կամ
թէ մի տապալուած ծառի տակ: Եւ հենց որ
ցրտերն ընկնում են՝ մտնում եմ իմ պատրաս-
տած բնակարանս և վրալիցս ծածկում ծառի
ճղերով: Իմ այդ ձմեռուակ ապաստարանը մտնե-

լիս՝ ետ-ետ եմ գնում, որպէսզի ոտիս հետքե-
րովը ինձ չկարողանան գտնել: Տեսէ՛ք արջերս
ի՞նչ խելօք կենդանիներ ենք:



Ես սովորաբար մտնում եմ որջս, երբ առա-
ջին անդամ սկսում է ձիւն գալ որից յետու
ճիւմը ամեն բան ծածկում է: Դուք գուցէ կար-

ծէք, որ ես էլ չեմ կարողանում շունչ քաշել
երբ պատսպարւում եմ տապալուած ծառի
տակ ու ձիւնը վրաս ծածկում է: Ո՛չ, սխալ-
ւում էք: Տաք շնչից ձիւնը հալւում է և մի
փոքրիկ անցք է բացւում, որտեղից մտնում է
օդը: Ուրեմն հասկանալի է՝ որ որջումս ազատ
կարողանում եմ շնչել. և եթէ ստիպուած չը-
լինէի մի~մի անգամ դուրս գալու ախտեղից
ուտելիք որոնելու համար, կամ շար մարդիկ ինձ
անհանգիստ չանէին, երեխ մինչև գարունը ան-
շարժ կըմնափի որջումս և երբեմն միան դարթ-
նելով՝ կրկին քաղցր քուն կըմտնէի:

Բայց Պետրոսի նման հարեան ունենալով՝
միթէ կարող էի հանգիստ քնել: Հենց առաջին
ձմեռը, երբ բնակարանումս տեղաւորուած՝ դեռ
ևս քուն չէի մտել, Պետրոսն արդէն նկատեց իմ
որջը: Նրա շները ինձ պաշտրեցին և սկսեցին
անհանգիստ անել: Պետրոսն էլ հրացանը ձեռին
սպասում էր ինձ մօտերքում: Բայց ես լանկարծ
դուրս թռալ և ախղէս արագ վազեցի, որ նա
հազիւ ժամանակ ունեցաւ հրացանը կրակելու,
բայց բախտիցս գնդակը չդիպաւ:

Հետեւեալ ամբողջ ամառուալ լնթացքում
նա միքանի անգամ փորձեց ինձ որսալու, բայց
ամեն անգամ կարողանում էի նրա ձեռիցն
ազատուել: Պուք մեզ՝ արջերիս լիմար էք կար-

ծում, բայց այդ սխալ է. գուցէ ձեզ թւում է
աղղակէս, բայց իսկապէս մենք խելօք կենդանի-
ներ ենք:

Նորից եկաւ աշունը. և ես նախ քան որջ
մտնելս՝ հարկաւոր համարեցի վերջին անգամ
թափառել անտառում և մի լաւ կշտանալ: Գը-
նում էի անտառի կածանով, որովհետեւ մենք
արջերս սովորաբար սիրում ենք ման գալ
կոխկրտուած ճանապարհով: Այդ ճանապարհը
ինձ հասցրեց մի վտակի, որի վրայով ձգուած
էին միքանի եղեիններ: Ես զգուշութեամբ սկսե-
ցի անցնել այդ կամուրջով:

Արջերիս հոտառութիւնն ու լսողութիւնը շատ
սուր է և դրանց շնորհիւ շատ անգամ ազա-
տուում ենք թշնամու ձեռից. եթէ նոյնքան էլ
սուր տեսողութիւն ունենալինք, այն ժամանակ,
անշուշտ, մեծ դժուարութեամբ ալիտի կարողա-
նալին մեզ որսալ: Այս անգամ գնում էի քա-
մու լնթացքով, ուստի հոտառութիւնս ինձ որեւէ
օգուտ բերել չէր կարող:

Պէտք է ձեզ ասեմ, որ ինչպէս լեաու երե-
ւաց, Պետրոսը այդ վտակի մօտ վայրենի բադ
էր որսում և թագնուած նստել էր նոյն կա-
մուրջի տակ:

Հողը ծածկուած էր փափուկ ձիւնով, ախ-
ղէս որ նա չէր կարող լսել իմ ոտի ձանը. ես

բոլորովին մօտեցել էի նրան, երբ լանկարծ տեսանք իրար:

Երկուսս էլ ցնցուեցինք. և հաւատացած եմ, որ Պետրոսը վախեցաւ: Նա իսկոյն բարձրացրեց հրացանը ու կրակեց, բայց ի զուր. գուցէ նրա չափազանց վախենալուցն էր, որ գնդակը նորից չդիպաւ:

Ես սաստիկ զալրացաւ. ատամներովս բռնեցի հրացանը և թէւ երկաթէ խողովակը չկարողացաւ կոտրել, բայց փալտէ կոթը ջարդ ու փշուր արի:

Պետրոսն ամենեին չաշխատեց իւր հրացանը ազատելու, կամ պաշտպանուելու. նա վայր ընկաւ և թևերը փռած՝ մնաց գետնին հանգիստ պառկած: Ես կարծեցի թէ հրացանի հարուածը փոխանակ ինձ դիպչելու, նրան էր սպանել: Միքանի անգամ պտուտ եկաւ շուրջը, չէր շարժւում. և որովհետև մենք՝ արցերս երբէք ձեռ չենք տալիս քնած կամ մեռած մարդու, ես էլ նրան հանդիստ թողեցի: Այդ ժամանակ աշքիս ընկաւ նրա որսորդութեան պալուսակը, որ լի էր բաղերով ու ճագարներով. հիանալի՝ ընթրիք:

Այս համեղ պատառները ինձ սաստիկ լզբաղեցրել էին: Ես կանգնած էի մէջքս Պետրոսին դարձրած և բոլորովին մոռացել էի նըրան: Մէկ էլ տեսնեմ՝ այն մարդը, որին ես

մեռած էի համարում, դէպի անտառն է փախչում:

Իմ բարկութիւնս արդէն անցել էր. այն հրաշալի ընթրիքը, որ ես նրանից ստացել էի, մեղմացրել էր սիրտս: Բայց եթէ մարդը փախչում է, արջը ի՞նչ պիտի անի, եթէ ոչ նրա ետևից ընկնի: Եւ ես վազեցի նրա ետևից: Պէտք է ասեմ, որ այդ խաղը ինձ մեծ զուարձութիւն էր պատճառում:

Մի ակնթարթ էլ՝ և ես պիտի հասնէի. բայց Պետրոսը այդ նկատելով՝ աւելի արագացրեց իւր քալերը: Իմ բարկութիւնս եկաւ, ուզեցի անպատճառ բռնեմ: Իսկ դուք գիտէ՞ք արդեօր, որ արջերս շատ ուժեղ ենք, մանտւանդ բարկացած ժամանակ մեր ուժը կրկնապատկւում է. ուրեմն երեակաւեցէք, որ այդ ըռպէին եթէ իմ թշնամին ձեռս ընկնէր՝ ի՞նչ պիտի անէի... Խեղդտմա՛ն կանէի իմ կարծ, բայց հաստ ու զօրեղ թաթերովս:

Պետրոսը երկիւղից իրան կորցրած՝ վազում էր դէպի գետը, դէպի մեծ գետը, որի մէջ թափւում են մանր վտակներ:

Ես կարծում էի, որ նա ափին հասնելով՝ պիտի ետ դառնալ, և այդ ժամանակ հեշտութեամբ կըբռնէի նրան. բայց այդպէս չեղաւ, նա մի ժառի հանդիպելով՝ արագ բարձրացաւ վրան:

Երևի կարծում էր, որ ես մոացի տարակուսած. ո՛չ, ես նոյնպէս սկսեցի ծառը բարձրանալ, թէև ոչ նոյն արագութեամբ, ինչպէս Պետրոսը: Երբ վեր նայեցի, տեսայ՝ մի ճիւղի վրայ կանգնած՝ ինձ է նակում. նա երևի կարծում էր, որ ես իմ ծանր տեղովս սիրտ չեմ անի ալդպիսի մի բարակ ճիւղի վրայ բարձրանալու: Կարելի է և իրաւ՝ մեծ լանդզնութիւն էր իմ կողմից ալդքավը, բայց այնպէս էի տաքացել, որ բարձրանալիս՝ էլ ո՛չ մի բանի վրայ չէի մտածում:

Ես սկսեցի բարձրանալ և ա՛յդ իսկապէս ինձ ուրախութիւն էր պատճառում: Իսկ Պետրոսը բոլորովին գոյնը գցել էր, և նրա ատամներն իրար էին դիպչում:

Որքան ես մօտենում էի Պետրոսին նա այնքան աւելի ու աւելի հեռանում էր դէպի ճիւղի ծալը:


Ճիւղը կոացաւ, յետոյ ինչոր ճրճրթաց, կոտրուեց, և ես ու Պետրոսը գլորուեցինք ներքև:

Ծառը բարձր էր, իսկ մենք նրա կատարն էինք հասել: Եթէ մենք գետին ընկնէինք, լաւ կը ջարդուէինք, բայց ծառը ուղիղ գետի ափին էր գտնւում և մենք ջուրն ընկանք ու կարգին լողացանք:

Ինչպէս դուր եկաւ ալդ Պետրոսին՝ չգիտեմ,

բայց ինձ ամենևին դուր չեկաւ: Ջուրը շատ սառն էր: Բարեբախտաբար ես լաւ լող տալ գիտէի և լողալով էլ շուտով հասալ ափը, թափ տուեցի վրակիցս ջուրը և հանգիստ շարունակեցի ճանապարհս:

Սառը ջրում լողանալուց յետոյ՝ ես բոլորովին մոռացալ Պետրոսի մասին. իսկ երբ նորից լիշեցի, ալ ևս աչքիս չէր երևում: Երևի, նա էլ լողալով հասել էր ափին, բայց աշխատել էր աչքիս չերեալ, և կարծեմ այլես «արջ որսալու» ցանկութիւն չի ունենալ:



ուստ պատճ առից զար միանելու հեջ պատ
յան բայ առ ու պայտափառձաւ ։ այլ մաս
ինք պատճառը խուզու և խորու և մայթ
ութանուց ուժիւմ և ուստ ութառի ծանու

Գ Ա Յ Լ Ը

(Յեքեաթ)

Ա.



ինում է չի լինում, մի մեծ,
առողջ և ուժեղ գալ է լի-
նում։ Նրա մարմինը ծած-
կուած էր մոխրագոյն, խիտ
ու երկար մազով, որ ձմե-
ռուայ ցրտերին լաւ տաք էր
պահում նրան։ Նրա դեղնագոյն մեծ-մեծ տ-
տամները սարսափի էին ազդում նապաստակնե-
րին, բայց ինչո՞ւ միան նապաստակներին
փշենք, քանի որ նրանցից շաա աւելի մեծ և
ուժեղ կենդանիներն անդամ, վախից դողում
էին գալի զզուելի կրծտող ատամները տես-
նելիս։ Նրա աշքերը արիւնալից էին, համար-
ձակ և հեռատես, իսկ մութ գիշերները
կրակի պէս էին վառւում՝ երբեմն կարսիր, եր-
բեմն կանաչ լուս արձակելով։ Հոտառութիւնը
նոյնպէս հիանալի էր, նրա կեանքում գեռ չէր

պատահած որ մի որսորդից հարուած ստանար։
Մի անդամ, դեռ փոքր ժամանակը, անփորձու-
թիւնից նրա խելքին փչեց մի գիւղացու վրայ
լարձակուել որը անտառում ծառի կեղևներ էր
պոկում. չգիտեմ ինչու, գիւղացին նրան մի տը-
կար ու հանդարտ մարդ էր թուացել և ինքը
կարծել էր թէ նրա կոկորդը կրծելը մի շատ
հեշտ բան է։ Ատամները կրծտելով դուրս վազեց
թփի ետևից և նետուեց գիւղացու վրայ։ Բայց
գիւղացին, ինչպէս երևում է, վախկոտներից չէր
և հենց որ տեսու ալդ անսպասելի մոխրագոյն
ալցելուին՝ իսկոյն կացինը ձեռքն առաւ... Գայլը
այս տեսնելով՝ վախաւ անլատացաւ գիւղացու
աչքից։

Այնուհետեւ գայլը ալսպիսի լիմարութիւններ
չէր անում. արդէն մեծացել ու փորձուել էր,
հեշտ չէր նրան խաբելը. այժմ նա հասկանում
էր, որ գիւղացու արտաքինով չպէտք է խաբուել.
նա զգոյշ և խորամանկ էր դառել։

Նրա որջը գտնւում էր խիտ անտառի խոր-
քում և ծածկուած էր ծառերի կոտրտուած ճիւ-
ղերով, սեացած կոճղերով և արմատներով։ Որ-
ջում ապրում էր ինքը մակը իւր ճագուկներով, ո-
րոնք դեռ փոքր էին և չէին կարողանում իրանց
համար կերակուր ճարել։ Իսկ հայրը վագվզում
էր անտառի բաց տեղերը, գաշտերը և գիւղի

Ճրջակաւ անտառները, որ իւր համար որս կամ որևէ գէշ գտնէ. և բոլոր ձեռքն լնկածը տառում էր իւր ձագուկներին: Երբեմն նրա ճանկն էր լնկնում մի չնիկ, որ անզգուշութեամբ հեռացել էր տնից, կամ մի նապաստակ, որ նոյնպէս անզգուչ կերպով անտառի բաց տեղերն էր դուրս եկել. և երբեմն էլ սատկած ձիու կամ որևէ կենդանու ոտ էր քաշ տալիս:

Երբ ձագերը մեծացան, ծնողները նրանց լուս աշխարհ հանեցին. սկզբում տանում էին միայն մինչև անտառի ծալը, իսկ յետու աւելի հեռու. նրանց սովորեցնում էին որսի ետևից լնկնել և բռնել: Նրանց ալդ արհեստին վարժեցնելու համար նրանք լնտրեցին ամենաանվտանգ, անզէն և միևնուն ժամանակ ամենից թեթևամիտ կենդանին, այն է՝ ոչխարը: Զագուկները հանաքով և խաղալով լնկնում էին գառնուկների ետևից, բռնում էին նրանց և ձեռաց խեղդամահ անում: Իսկ ծնողների սիրտը ուրախութիւնից բարախում էր, երբ տեսնում էին գառնուկների անօգնական թլպրտալը իրանց ձագուկների ձեռքում: Թշուառ գառնուկները վերջապէս արիւնաներկ տարածւում էին գետին:

Սակայն հայրը շատ քիչ էր զբաղւում իւր ձագուկները կրթելու, ալդ գործով մեծ մասամբ մարդն էր պարապում և վարժեցնում էր


նրանց՝ լափշտակելու և սպանելու ասպարիզում:

Հայրը շարունակ թափառում էր. նա կամ գալերի խմբերի հետ էր միանում, որոնք ապրում էին շրջակալքում, կամ միայնակ էր քարշակալիս: Խմբի հետ նա ձմեռն էր լինում, այն էլ կարճ ժամանակով: Ձմեռուալ սաստիկ ցրտերին գալերի մէջ երբեմն սարսափելի իրարանցում էր լնկնում. նրանք իրար խածոտելով՝ միմնանց բուրդ էին գզում:

Այսպիսի կռիւներում պատահում էր, որ գալերից մէկը կոկորդից սաստիկ վիրաւորուելով՝ լնկնում սատկում էր. այն ժամանակ սատկած գալը իւր լնկերներին կերակուր էր դառնում:

Մեր գալը ձմեռը շատ տիսուր էր անց կացնում և երբեմն ամբողջ շաբաթներով թարմ մսի համ չէր տեսնում: Ամեն բան ծածկուած էր ձիւնով: Չիերը, կովերը, հորթերն ու ոչխարները գոմերում խոտ ու դարման էին ուտում: Մինչդեռ գալը ստիպուած էր ողորմելի գէշով կերակրուելու. այն էլ շատ անգամ մեծ ջանք էր գործնում, որ դտած բանը սառուցի տակից դուրս բաշէ: Գալի բարկութիւնը գալիս էր, երբ մտաբերում էր թէ քանի՛քանի անասուններ ալդ միջոցին ապրում էին գոմերում, բոլորովին ի զուր՝ առանց որևէ է օգուտ տակու իրան:





Գիշերները թախծոտ տուաւորութեան տակ,
երբեմն մտնում էր անտառը և տխուր ու վհա-
տուած նստում ձիւնապատ գետնի վրայ։ Նրա

չուրջը ձիւնի տակից երևում էին փթած սև
կոճղերը և հեռու մուզլ ստուերների նման կանգ-
նած էին թաւուտ եղեիններն ու սոճիները։ Մեր
քաղցած գալը երկար ժամանակ նստում և
գլուխը կախ ձգած մտաբերում էր ամառուալ
քաղցը և աշնանալին ոսկեփալ ու տերեազարդ
առաջին օրեր։ Յանկարծ ինքն իրան կատաղում
էր և դունչը վեր բարձրացնելով՝ սկսում էր
վայրենի կերպով ոռնալ, ձիգ տալով իւր խղճալի
ձախը, որ տարածւում էր ամբողջ անտառում...
Անտառում գերեզմանալին լուսթիւն էր
տիրում։ Գիշերը սև բողով ծածկել էր թաւուտ
անտառը. գունատ լուսինը լողում էր մոխրա-
գոյն ամպամած երկնքում, իւր աղօտ լոյսը տա-
րածելով երկրիս վրայ...»

Գիւղերում վայրենի ոռնոցը լսելով՝ մար-
դիկ ասում էին.

— Ահա՝ գալերը ոռնում են։

Յանկարծ գալը լուսում էր և ականջ դնում.
Հեռու հեռու ինչ որ գիւղից շները անհանգիստ,
խռովոտ հաշոցով պատասխանում էին նրա լու-
սահատ ոռնոցին։ Շները կարծես ծաղրում էին
նրան։

բ.

Գալլ ձմեռն էլ երբեմն յաջողութիւն էր ուշ նենում:

Մի անգում, ուշ երեկուեան, գալլ կալուածատիրոջ տնից լսեց շան յանդուզն հաչոցը և իւր բոլոր ուժով դէպի այն կողմը վազեց: Բայց այն շունը, որ իւր հաչոցով գրաւել էր գալին՝ մի մեծ, փորձուած, պահապան շուն էր, խելքը գլխին, իւր կեանքում շատ բան տեսած: Գուշակելով գալլի մօտենալը՝ մեր սե գամբոը մի ակնթարթում բարձրացաւ կտուրը:

Գալլ բարկութիւնից սկսեց ատամները կրծտել և փալտերի ետելը պահուելով՝ նախում էր դէպի բակը:

—Ա՛յ անպիտաններ, երեխ իրար խօսք էք տուել ինձ քաղցած սպանելու, կատաղած փլնթվնթաց գալլը դէս ու դէն նախելով:

Զմեռուակ մաւթ մառախլապատ դիշեր էր:

Սպիտակագոյն ամպերը պատել էին երկինքը: Գիւղերում և դաշտերում մթութիւն ու դատարկութիւն էր տիրում, միան կալուածատիրոջ տնից և նրա ծառաների խրճիցն էր լուս երեւում:

Գալլ լսեց թէ ինչպէս կալուածատիրոջ տան զուռը թխկացրին և մի կին, մեծ շալով փաթաթուած, շտապ բալերով մտաւ խոհանոցը.

Իսկ լետով պատշգամբում երեւաց սենեակի փոքրիկ շնիկը: Այդ շնիկը, որին Սևուկ էին կանչում, մի սիրուն կենդանի էր, սպիտակ բծերով, սե, փափուկ ու մետաքսանման մազով, խելօք ու շագանակադոկն աչքերով. պառաւ տիկինը շատ էր սիրում դրան: Գիշերը Սևուկը տաք ու հանգիստ քնում էր տիկնոջ ոտների մօտ բարձի վրայ: Իսկ այժմ նա դուրս եկաւ փոքր ինչ զրօսնելու: Գալլ փալտերի ետելից բարձրացրեց վիզը և զլուխը մի փոքր կռացնելով՝ աչքերը շոեց շան վրայ: Շնիկը աւելի ու աւելի էր հեռանում ընակարանից: Գալլ զգո՞ւշ դուրս եկաւ փալտերի ետելից:

Սևուկը երբէք գալլ չէր տեսել: Նա չհասկանալով թէ ի՞նչ հիւր կարող էր շնորհ բերել այսպէս անժամանակ, և երեխ ցանկանալով մի փոքր էլ հետը խաղալ, ինչպէս խաղում էր դամբռի հետ, առանց որևէ երկիւղի ու կառկածի վստահութեամբ մօտեցու գալին: Գալլ նոյն իսկ ժամանակ շունեցաւ զարմանալու, թէ ի՞նչպէս որսը ինքը իւր ոտով գալիս էր զոհուելու...

Սակայն շնիկը շուտով հասկացաւ, որ իւր բանը վատ է. ամբողջովին կուչ եկաւ, պոչը դէպի իրան սեղմեց և ճշալով սկսեց լետ-լետ քաշուել, բայց արդէն ուշ էր... Այլ ևս չէր կարող տաք ու յարմար սենեակում ապրել,

տիկնոց մօտ փափուկ բարձի վրայ պառկել...
Գալլ նրա վզիցը ամուր բռնել էր:

— Ո՞, քեռի, ցաւում է, թող ինձ, ճշաց
խեղճը չնշասպառ՝ երկիւղից ու ցաւից դողա-
լով: Ես ուզում էի միայն հետդ խաղա՛մ:

— ՀԱՇ, փնթփնթաց գալլ, իւր զզուելի ա-
տամները կրծտելով: Դու ուզում ես խաղալ,
իսկ ես ուզում եմ ուտել:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, լեզուն կապուելով թոթո-
վում էր Սևուկը, իւր վշտալի ու հանգչող
հալեացը գալի վրայ դարձնելով:

— «Ինչո՞ւ, ինչո՞ւ», ծաղրելով կրկնեց գալլ,
դեռ հարցնում էլ է, դեռ համարձակում է
հետս վիճել, փիէ՛...

Գալլի բերանը բացուեց և... հա՛փ, Սևուկի
ոսկորները փշրուեցին: Եւ այս բոլորը եղաւ
արագ ու անսպասելի կերպով: Շնիկի վերջին
ազաղա՛լը, նրա ցաւի և լուսահատութեան հառա-
չանքը հանդաւ ձմեռալին գիշեռաւ մառախլա-
պատ մթութեան մէջ: Գալլ Սևուկի կոկոր-
դից բռնելով փախցրեց դաշտը և այստեղ մոք-
րազարդեց:

Իսկ պառաւ տիկինը երկար ժամանակ
տխրում էր իւր շնիկի վրայ:

Մի ուրիշ անդամ ալսպիսի մի դէպը պա-
տահաց դարձեալ ձմեռը, լուսադէմին: Սպօտ

արշալովսը հազիւ հազ լուսաւորում էր արևելքը:
Գունատ լուսինը դեռ բարձր էր կանգնած եր-
կընքում և ծխագոյն ամպերի ետևը պահուե-
լով՝ սպիտակագոյն լոյս էր սփռել երկրիս վրայ:
Ամեն տեղ մեռելալին լուսթիւն էր տիրում: ոչ
ձախն, ոչ սոսափիւն, ոչինչ չէր լսում, կարծես
ամեն ինչ սառել, մեռել էր, և մի ինչոր
կախարդական քուն մտել: Փայտէ խրճիթների
տանիքների վրայ դեռ չէր երեացել մոխրա-
գոյն ծուխը... Կարծես ալդ երկիրը մեռել, քա-
րացել էր:

Ալդ միջոցին գալլ ման էր գալիս անտա-
ռի ծալրին, սպասելով գոնէ մի խղճուկ նապաս-
տակի, որ լանկարծակի վրայ ընկնի: Գլխակոր
և պոչը քաշ ձգած, նա թափառում էր թփերի
մէջ: Յանկարծ տեսաւ, որ սահնակով գալիս է
մի գիւղացի փալլուն կացինը գոտկում, իսկ
ձեռքին մի մեծ մտրակ: Երեխ նա անտառ էր
գնում փայտ կոտրելու, կամ չոր խոտ հաւա-
քելու: Նրա նիհար ձին դանդաղ քալերով
գնում էր ձիւնածածկ ճանապարհով: շունն էլ
վազում էր սահնակի ետևից: Գալլի բանը չէ
գիւղացու վրայ լարձակուելը... «Երկիւղալի է
մարդու հետ գործ ունենալը», փնթփընթաց գալլ.
«Նա առանց երկար խօսելու կացինը գլխիդ կը-
տայ, կամ հենց ուղղակի վրադ կընկնի և կո-

կորդիցք կըբռնի: Ամուր են նրա ջլոտ, եր-
կաթ. ձեռները... Ո՛հ, ամուր են»:

Գայն ալգախիսի անցորդներով շտո չէ հետ-
տաքրքրւում. ճիշտ է՝ առանց ետ նալու չէ
փախչում նրանցից, բայց մօտ էլ չի գնում: Գայլը
քիչ հեռացաւ և թփերի միջից սկսեց հետահուտ
լինել շանը: Նա սպասում էր այնպիսի մի լարմար
ըոսկին, երբ շունը ետ մնար գիւղացուց, կամ մի
ուրիշ կողմ վազէր: Նա բաւական երկար հետեւ-
ում էր նրան գդուշ քայլերով, մինչև վերջապէս
լաջողուեց... Շունը ճիւնի վրայ նկատեց նա-
պաստակի հետքեր, լանկարծ իւր ընթացքը փո-
խեց և աւելի ու աւելի հեռանալով տիրոջից՝
ընկաւ թփերի մէջ:

— Բողա՛ր, Բողա՛ր, ա՛յ դու անպիտան թաշ-
փառաշրջիկ, բարկացաւ գիւղացին, տեսնելով
որ շունն ալ ևս իւր մօտ չէ:

Իոկ գայն ալգ միջոցին արդէն հասել էր
շանը և իւր ատամները նրա կոկորդն էր խրել:
— Վա՛յ աղա ջան, օգնիր ինձ, կորաւ գլուխս,
մոխրագոյն գայլն ինձ խեղդում է, ոռնում էր
շունը, զուր տեղն աշխատելով դուրս պրծնել
իրան ճնշող թաթերից:

Շունը խեղդում էր. նրա աչքերը պղտոր
ջրով սրողում էին: Լուռում էր գիւղացու ձախը.

— Բողա՛ր, Բողա՛ր:

Այն ինչ գայլն արդէն խեղդել էր Բողարին և
անտառ փախցնելով՝ միանդամից այնպէս լափել
սլրծել, որ հազիւ ոսկորներն էր մնացել:

Այսպէս ուրեմն թէպէտ գայլը ձմեռն էլ մի-
մի անգամ թարմ միս էր ունենում, բայց մեծ
մասով օրերը քաղցած էր անց կացնում և շտո
էր տիսրում: Այդ պատճառով գիշերները անտա-
ռի բացումը նստած՝ նալում էր մութ երկնքին
և իրան շրջապատող խիտ անտառի ամայու-
թեան մէջ ոռնում էր խղճալի ձախն երկար
ձիգ տալով:

Գարնանը գայլի գրութիւնն աւելի բարւոք-
ւում է: Կէսօրին արևման սկսում է աւելի ու աւ-
ելի բարձրանալ հորիզոնի վրայ: Ճնճուկներն
էլ ցանկապատից ցանկապատ թոշկոտելով՝ աւ-
ելի բարձր ձախով են ծրլվում: Հոտլում է
սառած ովանդակ «Ճիւնէ մարդ», որ շինել
էին չարաճճի տղաները: Զիւնը անդախտանում
է: Առուակները ձորերում վազում, կարկաչում
են, պարզ լսելի է գարնան ջրերի բչքցոցը գի-
երալին լուռթեան մէջ: Առաւօտները կապուտ
երկրակամարի տակ երգում է արտուտիկը:
Այսուհետեւ խոտը սկսում է կանաչել, ծառերը

զարդարւում են նորաբողբոյ տերևներով, գարնան առաջին ծաղկները դեղին գոյն են տալիս մարգագետիններին. թռչունները երգում են օդում...

Զիերը, կովերն ու ոչխարները, որոնք ձմեռը նիհարել էին սնունդի պակասից, ալժմ հաղիւ հաղ շարժուելով տեղից՝ գնում են դաշտը և աճտեղ մեծ ախորժակով ուտում են թարմ խոտը:

Գալի աչքերը վառւում են... բայց անասունների վրայ անժամանակ լարձակուելլ միտք չունի, որովհետև ձմեռ չէ, որ նրան չտեսնեն. ալժմ ամեն տեղ թափառումմ են բանուրները, աղմուկով վազվզում են չարաձճի և անհանգիստ տղաները. «Կարկառը է աչքը չորս բանալ», մտածում է ինքն իրան գալլը, հիմա ախաղիսի ժամանակ է, որ կարելի է լաւ օգտուել, բայց և կարող է պատահել, որ կեանքդ վրայ տառ Եւ գալլը իւր ասածի պէս «աչքերը չորս բաց արած» դէս ու դէն է ընկնում, հոտոտում և իւր համար որս որոնում:

Վերջապէս գիւղից հեռու, դաշտի ծալրին նա նկատեց ոչխարների հօտը, որ անհովիւ թափառում էր: «Բախտս բանեց» մտածեց գալլը՝ աչքը գցելով ամենից շաղ ոչխարի վրայ. նա կարծես առաջուց վայելում էր այն հաճուքն ու

զուարձութիւնը, որ պիտի պատճառէր նրան ոչխարներից ամենալնտիրը:

— Այս, ինչպէս սիրում եմ թարմ միս, մանաւանդ ձմեռուայ սովից յետու, մտածում էր գալլ՝ նայելով հանգիստ արածող ոչխարներին և գառներին... ո՛հ, որքան ախորժելի է:


Գալլի բերանի ջուրը գնաց. վառող աչքերով նա կարծես հեռուից արդէն խժուում էր ոչխարները: Ահա՝ նա կամացուկ մօտենում է... միայն մի ցանկապատ է բաժանում նրան այն տեղից, ուր զբունում է «կենդանի միսը»: Իրանից թող բոլոր կենդանիներին գալլը «ման եկող միս» էր անուանում:

Մի ակնթարթում նա թռաւ ցանկապատի վրայից և կայծակի արագութեամբ ընկաւ ոչխարների վրայ:

Ոչխարները, յալտնի բան է, ակից գլուխները կորցրած՝ սարսափած սկսեցին դէս ու դէն ընկնել: Նրանք շփոթուած և միմեանց հրելով վազում էին, առանց իմանալու թէ ո՞ւր կամ ինչո՞ւ, մէկ էլ յանկարծ կանգ էին առնում, մայում, և մի տեսակ լիմար հետաքրքրութեամբ յետ նալում, կարծես թէ սպասում էին գալլին:

Գալլը բռնեց այն ոչխարը, որի վրայ աչք էր գցել:

Ոչխարն անշարժ ընկած էր գետնին և դը-
ժուար էր շունչ քաշում. նա այլ ես չէր ընդ-
դիմադրում, այլ գետնին փոռւած տմբողջովին
դողում էր սարսափից: Այո՛, երկիւղը կարծես
լանկարծ ուժասպառ արեց նրան և տներեռքի
շլթաներով կաշկանդեց: Նա ուշաթափ դրու-



թեան մէջ երբեմն խփում, երբեմն բաց էր ա-
նում իւր սարսափից մթնած աչքերը: Բերանը
կիսարաց էր մնացել, շնչառութիւնը կատարւում
էր անկանոն և մեծ դժուարութեամբ: Երբ դացը
նրա կոկորդը սեղմեց, լուսահատուած ոչխարը
ուզեց դլուխը բարձրացնէ և վերջին ուժը գործ

դնելով գալի թաթերից իրան աղատէ, բաց ի
զուր... Նրա ուժասպառ դլուխը ընկաւ գետին...

Յանկարծ ոչխարը զգաց, որ գալի սուր
ատամները խրւում են նրա կոկորդը և
սկսում են մարմինը պատառոտել: Անասելի
սարսափով նա նախում էր իւր վրայ ընկած
գալին և այլ ես անկարող էր իւր անմիտ հա-
յեացը հեռացնել այդ կատաղի դնչից, որ շա-
զախուած էր արիւնով, իւր սեփհական արիւնով:

— Ա՛յ, գալ, թո՛ղ ինձ, աղաչում եմ, բաց
թող ինձ, թշուառիս. — ես երկու գառնուկ ունիմ,
մինը նախշուն է, միւսը սպիտակ. նրանց ինքս
եմ կերակրում: Նրանք դեռ փոքր են... որբ կը-
մուան, մեղք են... Զէ՞ որ առանց ինձ կընեղաց-
նեն, նրանց... վա՛, գալ, սիրելիս, թող ինձ,
խղճա՛...

Ոչխարը խեղդւում էր: Վարդադոյն արիւնը
հոսում էր վէրքից և ներկում նրա փափուկ
ու մոխրագոյն բուրդը:

— Խղճա՛-ա-ա՛, մոնչաց գալը տտամները
կրծտելով և զուարձութիւն զգալով իւր զոհին
ազդած երկիւղից, նրա տանջանքներից ու ցաւից
նրա լուղիչ, սարսափ ազդող մակունից և որբե-
րի ապագաւ վիճակի մասին նրա ունեցած եր-
կիւղից: «Խղճա՛», կրկնեց նա ծաղրելով. ինչո՞ւ
պէտք է խղճամ, լիմորիգլուխ: Դու առում ես,

որ գառնուկներդ որբ կըմնան... աւելի լաւ,
նրանց էլ իւր ժամանակին ճանկո կըդցեմ: Մի՛
վախենալ, երկար չեն ապրի քեզնից լետոյ:

Գալլը բաց է անում ատամները և նրա
արիւնոտ շրթունքները ծածկում են չար, լաղ-
թական ժպիտով.

— Լսի՛ր, գալլ... վերջին ուժը հաւաքելով
մալում է ոչխարը, գո՞նէ գիւղացուն խղճա՛, չէ՞
որ նա շատ խեղճ է... նրա ունեցած-չունեցածը
ես եմ որ կամ ու իմ գառնուկներս...

— Ես ի՞նչ գործ ունիմ քո գիւղացու հետ,
զալրացաւ գալլը, նրանից ոչ մի լաւութիւն չեմ
տեսել. քո բոլոր գիւղացիներդ էլ որ սովոց
կոտորուէին, ես ամենևին չէի ցաւի... Դէ՛հ, քեզ
հետ էլ վերջացնեմ հաշիւս:

Ոչխարն այլ ես չէր մալում, միայն լուռ
լաց էր լինում: Գալլն իւթ աշքերն աւելի մօ-
տեցնելով՝ ուշադրութեամբ նալեց ոչխարին: Նրա
հեզ ու տիսուր աշքերը գթութիւն և կեանք էրն
աղերսում...

— Այս բոպէին քեզ կուտեմ, լսո՞ւմ ես, գիւղա-
կան չարախնդութեամբ շնչաց գալլը: Ես կա-
մենում եմ միայն աւելի երկար չարչարեմ քեզ,
հասկանո՞ւմ ես. իսկ լետոյ կուտեմ... ոսկորներդ
կըջարդութեմ... կուրծքդ կըպատռեմ, տաք-տաք
փորոտիքդ կըհանեմ... Ա՛խ, ի՞նչ համով է, ուխա՛...

Սրիւնդ կըխմեմ և քեզ էլ ամբողջովին մինչև
վերջին կտորդ կուտեմ: մինչև անգամ ոսկոր-
ներդ էլ չեմ թողնի, բացի դատարկ գանգիցդ,
այն էլ բոլոր ուղեղդ ծծելուց լետոյ: Եւ այդ էլ
շուտով կըլինի, այս բոպէին, տե՛ս... մէկ, երկու...
մեռիր, անաստւն, շարունակեց գալլը կոանալով
դէպի նրա տկանջը. իմացած եղիր, որ գառներդ
էլ չեն աղատուի իմ ճանկերից. ես նրանցով էլ
այնպէս կըզուարձանամ, ինչպէս այժմ քեզնով
զուարձանում եմ. անպատճառ... մէկ, երկու,
երեք...

Այդ մեջոցին ինչ-որ օտարութի բան պատա-
հեց: Կարծես նոյն իսկ գալլն էլ զգացուեց...
Մեռնող ոչխարը անհաւատալի ուժով բարձրա-
ցրեց գլուխը. նա ուշադրութիւն շդարձրեց գալլի
վրայ, կարծես չէր նկատում նրա կրծտող
ատամները, կարծես մոռացել էր բոլոր երկիւղն
ու սարսափը. նա վճռականութեամբ գլուխը
գարձրեց այն կողմ, որ կողմը փախել էր հօտը:

Մահաբեր վշտով նաև դէպի դաշտը և
խղճալի կերպով մալեց.

— Գառնուկնե՞րս, գառնուկնե՞րս:

Բայց նոյն վալրկեանին ամեն ինչ վերջացաւ:
Գալլն ոչխարի վրայ լնկաւ և ինչպէս առա-
ջուց ասում էր, պատռեց նրա կուծքը, հանեց
այնտեղից դեռ ես տաք, բաբախող սիրտը և

խժուեց: Ոչխարի քնքուշ ոսկորները ճարճաթեցին
գաղի տտամների տակ...

Գալլը միշտ քաղցից չէր, որ յարձակւում
էր «կենդանի մսի» վրայ: Երբեմն, երբ նա մի
տմբողջ ոչխար էր տտում, պէտք է որ կուշտ
լինէր և այլ ևս չյարձակուէր, բայց ոչ, նորից էր
յարձակւում. դա գալլի բնաւորութեան լատկու-
թիւնն էր: Նա մի-մի անգամ ընկնում էր հօտի
վրայ և աննպատակ սկսում աշ ու ձախ կոտո-
րել. միան ոչխարների բրդի փնջերն էին օ-
դում թռչկոտում... Մէկի կողքն էր պատում
ու ձգում. երկրորդի միայն համը տեսնում ու
թռնում, երրորդի կուրծքը պատում, թիշ ա-
րիւն ծծում ու թռնում... Ալսպիսի բոպէներում
գալլը ուղղուի կատաղում էր:

Մի անգամ էլ մի ալսպիսի կատաղութեան
ժամանակ, գալլը յարձակուեց մի տղի վրայ, որ
թփի մօտ ելակ էր քաղում. կծեց նրա ուսը,
վայր ձգեց, բայց տղակի բախտից այդ բոպէին
մի կին փախը ձեռին աղաղակելով վազեց դէպի
գալլը, որ շտապով դէպի անտառ փախաւ...

Առևտսարակ ամբողջ ամառն ու աշունը
գալլի համար շատ լաւ էր անց կենում:

Ալսպիսով գալլը իւր կեանքում շատ էր խեղ-
դոտել շներ, նապաստակներ, ոչխարներ, գոռ-
ներ, հորթեր և ուրիշ բազմաթիւ իրանից թոլ
կենդանիներ: Նո երբեմն յարձակւում էր նոյն-
իսկ ձիերի ու կովերի վրայ, թէև ի հարկէ մեծ
մասով անկացող:

Մի անգամ ձին իւր բուռակը պաշտպանե-
լիս՝ ալնպէս ճարպիկութեամբ քացի տուեց գալ-
լին, որ թիշ էր մնում նրա զունչը ջարդէր:

Գալլը շատ վնասներ տուեց գիւղացիներին.
շատ խեղճերի լացացրեց... շատ թարմ միս կե-
րաւ, շատ տաք-տաք արիւն խմեց և դեռ էլի
շատ ալդպիսի լուսեր ունէր, բայց վերջապէս
նրա համար էլ եկաւ գժբախտութեան օրը:

Ե.

Գալն երբէք ալնպէս բաղցած չէր մնացել,
ինչպէս այս վերջին ձմեռը:

Մի անգամ, գիշեր ժամանակ, գալլը հոտո-
տելով և ականջ դնելով թափառում էր անտա-
ռի մօտ: Յանկարծ հոտով իմացաւ, որ մօտեր-
քում գէշ կայ: Ի հարկէ գէշը թարմ մսի համը
չունի, բայց լաւը շեղած ժամանակ, այն էլ պէտ-
քական է: Գալլը զգուշութեամբ դէս ու դէն նա-
յելով մօտենում է և ի՞նչ է տեսնում, — մի սատ-

կած ձի՝ սաստիկ նիհար, կողերը ներս ընկած,
իսկ գլուխը գրեթէ բոլորովին ձիւնի մէջ թա-
ղուած։ Գայլը այս ու այն կողմն է նախում, հոտ
քաշում, ուշադրութեամբ ականջ դնում,— ամեն
կողմ լուռ... Միմիան քամին է, որ մէկ-մէկ
փշելով սպիտակ տարածութեան վրայով՝ աւլում
տանում է ձիւնը։

Գայլը զգուշութեամբ մօտենում է... .

Յանկարծ գիշերային լուռութեան մէջ լսուեց
ինչ-որ մետաղի ձախն, որ բարձրաճան ճայթում,
ճռճռում էր, և գայլը խուլ ոռնոցով լընկնում է
ձիւնի վրայ։

Ի՞նչ բան է, այս ի՞նչ է նշանակում.
Ի՞նչ աներեւովթ և անլայտ ուժ էր, որ վայր
ձգեց գայլին... .

Դա մի մեծ ու ծանր երկաթէ թակարդ էր։
Գայլի առջեւի ոտը ընկել էր նրա մէջ։ Թակարդը
այնպիսի ուժով էր փակուել, որ մինչև անգամ
գայլի ոտի ոսկորը ճեղքուել էր։ Նա զուր էր
տշխատում թակարդը բարձրացնելու, զուր էր
դէս ու դէն ընկնում, կատաղութեամբ այս ու
այն կողմ խփում, որպէս զի թակարդից ազա-
տուի։ Զուր ջանքեր... Ալդալիսով նա իւր ոտին
աւելի վնասեց և անտանելի ցաւ պատճառեց
իրան։ Վերջապէս բոլորովին ուժասպառ՝ չարու-
թիւնից սկսեց ատամները կրծտել և լոգնած

ու արնաքամ ընկաւ ձիւնի վրայ։ Նրա շուրջը
եղած ձիւնը շուտով ներկուեցաւ արիւնի կարմիր
բծերով։

Գայլը կատաղութիւնից շնչասպառ էր լի-
նում։ Նա՝ որ այնպէս խորամանկ, այնպէս փոր-
ձուած էր, որսորդների հարուածներից լաջո-
ղութեամբ խոյս տալ գիտէր, մինչև այդ ժամանակ
ամեն տեսակ թակարդից և փոսերից լաջող կեր
պով ազատուել էր, այժմ, ծերութեան միջոցին,
լանկացն թակարդն է լընկնում. այն էլ ի՞նչի
համար, — մի ինչ-որ գէշի։ Ցաւալի էր, դառն ու
վիրաւորական, այնքան վիրաւորական, որ գայլը
թակարդին և իւր վնասուած արիւնու ոտին
նալելով՝ լուռութեամբ միան իւր բրդոտ գլուխն
էր շարժում։

Գայլի դրութիւնը ճիշտ որ դժուար էր։
Եթէ թակարդը փոքր ինչ թեթև լինէր, կամ
ինքը նրա մէջ ընկած լինէր ետեւի ոտով, այդ
ժամանակ շնալելով իւր զգացած ցաւին ու այն-
քան արիւն կորցնելուն՝ դարձեալ կաշխատէր
մի կերպ հեռանալու, թէկուզ այն անիծած եր-
կաթը հետը քարշ տալով, և անշուշտ կերթար
ու կըմտնէր անտառի խորքը։ Եւ եթէ նրա
բախտից լանկացն այնպիսի փոթորիկ բարձրա-
նար, որ այլ ևս չերեար լոյս աշխարհը, ո՛հ,
ալդ ժամանակ գայլի հետքերն իսպառ կոչնշա-

նալին, և որսորդները անտառում գուր ման գալուց յետով առանց թակարդի ու գալի դատարկ տուն կը վերադառնալին... Ա՛յս, ի՞նչ լաւ կը լինէր ալդպէս... Յետով գալը մի կերպ կազատուէր երկաթից, թէկուզ նոյնիսկ ոտը զոհելով: Զէ՞որ աւելի լաւ է երեք ոտով թռչկոտել, բան թէ ալժմեան պէս կոճղի նման մի տեղ ընկած մնալ և ըոպէ առ ըոպէ սպասել մահուան... ո՞հ, սարսափելի էր:

Վնասուած ոտը սաստիկ ցաւում, մղկուում և ալրուում էր, կարծես կրակի վրայ լինէր: Նրա շուրջը ձիւնն աւելի ու աւելի ներկուում էր արիւնով: Սարսափելի ծարաւն էլ մի կողմից էր նեղացնում գալին. Նա բերանը լցնում էր ձիւնով ու ագահութեամբ ծծում: Զգում էր, թէ ինչպէս արնաքամ լինելուց անհաճոյ ցուրտը թափանցում էր նրա մարմնի մէջ...

Ես ինչ-որ մըսում եմ, սառչում... շնչաց գալը ատամները կրծտելով:

Ծանր ու ձանձրալի երկար ըոպէներ անց կացրեց գալը. Նա ալդ միջոցին մոռացաւ, թէ որքան չներ, ոչխարներ, հորթեր ու նապաստակներ էր խեղոտել իւր կեանքում. ո՛րքան էր չարչարել կենդանիներին, ո՛րքան վսասներ էր տուել գիւղացիներին իւր կատաղութիւնով ու չարութիւնով. կարծես նրա վիշողութիւնը խան-

գարուել էր. ալժմ նա ալդ բոլորը մոռացել էր և իւր ջարդուած ոտին նալելով՝ ինքն իրան էր խղճում:

— Ե՞ս, մարդիկ, մարդիկ, շնչում էր նա գլուխը կախ ձգած, էլ ի՞նչ չեն հնարում մեզ վսասելու համար. էլ հրացան, էլ թոն, էլ մահակ... ալդ կարծես բաւական չէր, թակարդ էլ հնարեցին: Հարկաւոր էր հնարել, չէ՞ որ սա մի բարդ մեքենայ է, դժոխալին մեքենավ:

Ահա, թէ ի՞նչ դատարկ բաների համար են մարդիկ իրանց խելքը բանեցնում. ալդ գոված ու փառաբանուած խելքը: Եւ ինչի վրայ է վատնւում մարդկանց գիտութիւնը... Ամօթ ու խալտառակութիւն...

Ի՞նչպիսի սատանակութեամբ է սա լարուած... Հիմա արդէն հասկանալի է, որ ալս գէշը զիտմամբ, ինձ հրապուրելու համար, բերել ձգել են ալստեղ. նրա մօտ էլ զրել են ալս մահառիթթակարդը ու ճարպիկութեամբ ծածկել ձիւնով... չարագործնե՛ր, հրէնե՛ր...

Գալը խուլ հառաջանքով բարձրացնում է գունչը: Գիշերալին երկինքը անտարբեր կերպով տարածւում էր վերեւ և միլիօնաւոր շողշողուն աստղեր սառնութեամբ փալլում էին նրա վրայ: Շրջակալքում լուռթիւն և ամակութիւն էր թագաւորում...

— Թո՛ղ հրացաններով գալին ինձ վրայ, այդ
ուրիշ բան է, շարունակեց գալը, ես իսկոյն
պոչս ցուց կըտափի նրանց. անպէս կըտանափի,
ինչպէս քամին դաշտի վրայ: Բայց ո՛չ... նրանք
գտիս են անարդ նենգութեամբ, դարանով...

Գալը հառաջում և ցաւից կուշ էր գալիս:

— Գթութեան մի կաթիլ անդամ չունին,
շնչում էր գալը ատամները կոճտելով: Եթէ
օրինակի համար՝ հենց այժմ սկսեմ տղաշել,
նրանք ինձ կըլսե՞ն, կըգթա՞ն այդ բարբա-
րոսները, երբէ՛ք... ես լաւ գիտեմ նրանց անո-
դորմ բնաւորութիւնը... Հենց որ ինձ ակսալիսի
թշուառ ու անօգնական դրութեան մէջ տեսնեն,
ես հաւատացած եմ, որ իսկոյն հրացան կամ
կացին. կառնեն և մի հարուածով գլուխս կը-
ջարդեն: Զէ՞ որ կարեկցութեան զգացմունքը
անծանօթ է նրանց... չարագործնե՛ր, մարդաս-
պաններ:

Եւ գալը դեռ երկար ժամանակ կրկնում
էր իւր գանգատները մարդկանց խստալուսու-
թե սն վրայ, «աւազակներ, մարդասպաններ, շա-
րագործներ» շնչալով: Անդութարարածը զթու-
թեան վրայ էր խօսում. մարդասպանը գանգատ-
ում էր մարդասպանութեան վրայ... գալը մո-
ռացել էր, թէ ինչպէս թշուառ ոչխարը ւալիս
էր և զուր աղաջում, որ իրան աղատ թողնէ: Նա

մոռացել էր, որ խեղճ գտոնուկը նրա թաթե-
րի տակ թռապրտում ու մալում էր սարսափից և
խնդրուց էր որ թողնէ իւր մարդիկի մօտ գնալու:
Նա մոռացել էր, թէ ինչպէս անդութ կերպով
վարուեց Սկուկի հետ, որ նրա մօտ էր վազել խա-
ղալու: Նա մոռացել էր, թէ ինչպէս իւր կուար-
ճութեան համար ոչխարներ ու գառներ էր խեղ-
դոտում, ինչպէս ծաղրում էր նրանց կեանքի
վերջին բոպէներում... Նա երբեմն ուտում էր
գիւղացու միակ կենդանին: Նա առանց ավ և
ալութեան կծել էր գիւղացու երեխալին: Զա-
րագործը իւր շարագործութիւնները մոռացած՝
այժմ մարդկանց շարագործութիւնն էր լանդի-
մանում, այն մարդկանց, որոնք գալից ագա-
տուելու համար՝ թակարդ էին սարքել...

Վերջապէս գալը հանգարտուեց. նա լուռ
ու անշարժ ընկած էր ձիւնի վրայ, ինքն իրան
մխիթարելով, որ «գոնէ արժանաւորութեամբ կը-
մեռնի, առանց բողոքների ու նախատինքի..»

Յիմա՛ր, ուրիշ ի՞նչ էր մնում նրան անելու,
եթէ ոչ պառկել ու սպասել մահուան և սատ-
կել ծանր փալտի կամ կացնի հարուածների
տակ: Ակամաչ նա պիտի անշարժ մնար, քանի
որ չէր կարողանում շարժուել:

Նրա երգը երգուած էր...


— միան առաջ պատմութ ծրագիր ու ոչ բայց ան
ա ընդհանուր ոչ նախնական առաջնական ժամանակակից մաս
ու առաջնական ուղարկութ ու առաջնական առաջնական ուղարկութ

Զ.

Անցաւ դիշերը: Զմեռուալ սառն առաւոտը
կարմիր շողք էր ձգել երկրիս երեսին: Պարզ կա-
պուտակ երկինքը, առանց որևէ ստուերի, ա-
ռանց մի կտոր ամսղի, տարածուել էր ձիւնա-
պատ դաշտերի վրայ: Արևելքում հրդեհի նման
փալլում էր կաս-կարմիր տրշալուսը: Հիւսիսա-
լին խիստ քամին մի-մի անգամ վշելով՝ երե-
սանց վերցնում էր ձիւնը, տեղն ու տեղը սառ-
ցնում ու լետով տանում էր հեռու: Վերջապէս
ոսկեփայլ արեգակը խըր բոլոր գեղեցկութեամբ
երեաց հօրիզոնից, ձիւնէ հարթութեան վրայ
վրալեցին ու շողչողացին ցոլցըլուն կատերը և
արեի լուսը քնքուշ վարդագոյն կարմրութեամբ
ներկեց ողջ երկինքը:

Գալլը դուշակեց, որ այս ցրտին ինքը չի
դիմանար: Ահա՝ երեացին երկու գիւղացիներ,
որ գալիս էին դէպի նա: սպիտակ ու փալ-
լուն ձիւնէ հարթութեան վրայ պարզ երեւում
էին նրանք իրանց մուգ դոխի շորերով...

Գալլը նկատեց նրանց և ինքն իրան սկսեց
մտածել. «Տէ՛ր Աստուած, ի՞նչ սարսափելի տեսք
ունին սրանք իրանց մեծ-մեծ միրուքներով,



228

ցրտից կապտած կտտաղի երեսներով ու աւազակալին քաղըռւածքով»... Մէկը հրացանով էր գինուած, իսկ միւսը գոտկի մէջ էր խրել իւր փուլուն կացինը, որ նոր ծագող արեի ճառագալթշներից գույնում էր կալծակի նման: Կացնի փակը ներից փակում էր կալծակի նման: Կացնի փակը շատ անախորժ ու անտանելի կերպով էր ազդում գալի աչքերին: Նա աշխատում էր չընալել այն փակող մահառիթ գործիքին բայց նրա աչքերն ակամայ դառնում էին գէպի այն կողմը, որ կողմից մօտենում էին երկու մուգ մարմինները:

Եկան:

— Հը՝ ընկե՞լ ես, ասաց որսորդը. Խմի՞ր կացինդ, եղբայր, բայց տե՛ս որ կաշին չփշացնես, գլխի՞ն տուր:

Գալլը կծկում ու գողում էր և անզօր կտաղութեամբ ատամները չքխչխկացնում: Դեռ էլի շատ չարութիւն կար նրանում... Խոչպիսի զուարձութեամբ նա կընկնէր այն գիւղացու վրայ և իւր մեծ-մեծ ատամները կըխրէր նրա կոկորդը:

Գիւղացին կացինը հանեց ու բարձրացրեց: Այդ վերջին բոպէին միան նկատուեց, թէ գալլը ո՛րքան վախկոտ է եղել: Նա հառաչեց, ոռնաց և սկսեց սարսափելի կերպով այս ու այն կողմն ընկնել, աշխատելով գուրս պրծնել թակարդից:

893
ԿԸ

Ի՞նչպէս կուղէր նա այդ բոպէին հեռու լինել այդ սարսափելի տեղից, պահուել անտառի ամենամթին խորքում, որևէ կորած անկիւնում...

Գալլն ատամները կրծտեց և արիւնալից աչքերը լայն բաց արաւ...

— Խփի՞ր, ասաց որսորդը:

Կացինը փակեց պարզ օդում և ուժեղ ձեռքով ուղղուած հարուածը իջաւ գալի գլխին:

Գալլը խուլ խոպոցով տարածուեցաւ գետնին:



յանց առևէ միջնորդ ըստ ու պերաբ սկզբան
վաստակած յաւագոր պահան վեհապահ ըստ
ամս նույն Տիկ Առաքու մանաւածան
առանձին և բանալի պահապահ այսոք

... այս առ մայ պահազար
պահապահ պահա ամփակ
ամս բախ և նոր բան պահապահ պահապահ
ամփակ պահա ամս պահապահ նոր պահապահ
ամս պահապահ ինքը պահապահ

ամփ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0386759

4486

